

ՎԵՀԱՓԱՌԻ ԿԱԹՈՒՂՈՍՈՍՔԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ.

( Նաճակ Երևանից . )

. . . խմբագիր .

Հոկտեմբերի 28 - ին մօտաւորապէս ժամը 12 ին ժամանից քաղաքս Վեհափառ Հայրապետ և Սրբազնատուրը Կաթուղիկոսն ամենայն Հայոց՝ Մակար առաջին: Մեծապատիւ քաղաքալուի Պ. Վասիլ Գեղամեանցը քաղաքիս խորհրդարանի Հայ և Թուրք իրաւասունների հետ միասին դիմաւորեց Նորին Վեհափառութեանը քաղաքից մօտ երկու վերստ հեռաւորութեամբ, ուր այլ և հաց ներկայացնելով՝ կարգաց մի բաւականին ազդու ճառ: Նորին Վեհափառութիւնը օրհնելով իրաւասուններին, յայտնեց շնորհակալութիւն մեծապատիւ քաղաքագլխին և ընդունեց ճառը: Քաղաքիս նշանաւոր անձինքներից ոմանք ձիով և ոմանք կառքերով դիմաւորեցին և մեծ հանդիսով ընդունեցին քաղաքիս մէջ: Այն ճանապարհը, որով անցնում էր Նորին Վեհափառութիւնը իսուռն էր ամեն գասակարգի մարգիլիներով, երկու կողմի պատշգամբները, լուսամուկները և պատերը զարդարուած էին գեղեցիկ գուրգերով: Մեծ փողոցի կենդրոնում, հրապարակի վերայ պատրաստուած էր վսեմ՝ կամարը՝ շքեղ տեսարանով, զարդարուած գոյնզգոյն դրօշակներով, և ուր գտնվում էր հոգեւորական գասը եկեղեցական սպասներով, — վայր իջաւ Նորին Վեհափառութիւնը: Բազմութեան միջից լսվում էին կեցցէների ձայներ և նուիրվում էին Նորին Սրբութեան ոտքի տակ թարմ՝ ծաղիկների փրնջեր՝ կանգնող օրիորդներից և պատանիներից: Բազմութիւնը ակիքացաւ, երբ սկսեցաւ « Հրաշափառ Աստուած » շարականը. Նորին Վեհափառութիւնը շրջապատուած հոգեւորական դասով անցաւ պճնազարդարուած կամարի տակից — աջ և ահեակ կողմերը եպիսկոպոսունքն էին, յետոյ փարգապետը և քահանայք՝ ամենից առաջ կարգով շարուած էին թեմական գպրանոցի աշակերտներն ուսուցիչներով, այոպէս հանդարտ քայլելով՝ գնաց Սուրբ Ասրգիս եկեղեցին: Բազմութեան շատութիւնից բացի եկեղեցուց՝ գաւիթում ևս լցուած էին: Երգեչալութիւնը դադարելուց յետոյ՝ Գերապատիւ Սրբազան Սուրէնեանցը կարգաց գրասորմի համակրելի ճառ, որը մեծաւ շնորհակալութեամբ և զուարթ գէմքով ընդունեց Վեհափառ Հայրապետը: Յետոյ սկսուեցաւ « Էջմիածինն ի հօրէ » շարականը, որի երգելու ժամանակը կանգնե-

ցաւ Նորին Վեհափառութիւնը և աւարտելուց յետոյ սկսեց խօսել եպիսկոպոսութեան և կաթողիկոսութեան բուն նշանակութեան վերաբերմամբ: մաղթելով Նորին Կայսերական Մեծութեան երկար կեանք: Նաև աւետեց ժողովրդոց Հայոց փակուած դրպրոցների բացման հատուտուն յոյսը և վերջապէս՝ օրհնութեամբ գոհունակութիւն մատուցանելով ժողովրդական և հոգևորական զասուց « սրահպանիչ » ասելով վերջացրեց հանդէսը: Գարձեալ Նորին Վեհափառութիւնը տարուեցաւ երգեցողութեամբ Առաջնորդարան: ուր ընդունեց ցանկացողներին: Հայերից յետ չըմնացին և Թուրքերից շատերը՝ Վեհափառին տեսնելու վերաբերութեամբ:

Երեկոյեան հրախառութիւն էր — քաղաքը լուսաւորուած էր ի յարգանս Վեհափառ Կաթողիկոսին: Հեռեւեալ օրը ներկայացան քաղաքի և պատահող մօտակայ գիւղերի քահանայքը: Քահանայքը Առաջնորդարանի դահլիճում կարգապահութեամբ կանգնած էին: Երբ Վեհափառը Վեհարանից դուրս եկաւ, Գեր. Սրբազան Սուրէնեանցը համառօտ բայց գեղեցիկ խօսքերով ներկայացրեց քահանայից Նորին Վեհափառութեանը. Վեհափառը ողջունելուց յետոյ՝ պատուէրներ տուաւ քահանայից: Ահա նորա խօսքերի էական մոտերը — « աշխատեցէք դուք հովուել ժողովրդոցը և ոչ ժողովուրդը՝ ձեզ — եղէք հովուող և ոչ հովուեալ: Իմ օրօք հոգևորականութեան պատիւը պէտք է բարձրանայ: Այն հոգևորականը — թէ վարդապետ և թէ քահանայ, որ չէ ցանկանում սրբութեամբ կատարել իւր պաշտօնը, լաւ է հեռանայ՝ աշխարհականաց կարգումն մնայ: Եւ աշխատեցէք եկեղեցւոյ խորհուրդները և արարողութիւնները գիտութեամբ կատարել »: Քահանայքը Նորին Սրբութեան աջը համբուրելուց յետոյ դուրս եկան:

Ահա և Երևանայ քաղաքագլուխ Պ. Վասիլ Գեղամեանցի ճառը:

« Վեհափառ Սուրբ Հայրապետ »

« Աստուածարեալ եպիսկոպոսապետ »

« Հայեաց քաղցր աջօք ի հին աւուրց ալեգարզն Արարատ. հայեաց և Հայրախնամ հեռատես սուրբ հոգևոյգ աջօք՝ որպէս հովիւ քաջ՝ ի համայն սիրելին Քո Հայապգիս, ի սերունդս՝ մեծ և հզօր Նահապետին Հայկայ և քաջ յաղթողին Արամայ, ընդ արդի

օրուեալս ընդ ամենայն կողմանս աշխարհիս: Եւ տես Գու, զի ցանկամբ ամենեքեան ամենայն հոգևով ընդ բարեբաղդ աւուրս մուտ Քո ի մերձաւոր քաղաքս մեր առ Առաքելական Աթոռով՝ Կաթուղիկէ լուսածառով Սուրբ Էջմիածնի, որ մնայ անհամբեր հոգւոյն հրճուանօք արժանաժառանգ Փոխանորդիդ տիեզերալոյս երանութեան՝ սիրալիր իւրում Փեսայիդ, աներկբայ յուսով ընդ Արքազան արի և արգար Տեսչութեան Նորին, Սրբոյ Հօրն մերոյ ասեմ՝ Գրիգորի Առաջնորդին՝ ունելով ունիլ և զընթացս և զգործառնութիւնս յամենայնի յօգուտ և ի լուսաւորութիւն իմա՝ և մանաւանդ՝ առուել ևս ի բարեկարգութիւն հոգևորական դասուն Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ մերոյ, որով և ի բարօրական պարծանս ընդհանուր Ազգիդ Հայոց:

« Ահա, Վեհափառ Տէր, այսպիսի լիակատար յուսով ի վերայ բարեխնամ Հովուապետիդ մերոյ՝ և ամենայն հոգւով մեծափափագ բաղձանաց՝ հայցեմք և մեք ի վերնխնամ Տեսչութենէ Հոգի զօրութեան և իմաստութեան հանդերձ լի ու լի առողջութեամբ ընդ բազմառեւ ամս պարգեւել Քեզ ընտրելոյդ իւրում՝ ի լրումն ցանկութեան Ազգիդ, ընդ որ ի միասին շնորհ կալնում և ես որպէս ներկայացուցիչ բոլոր հասարակութեան քաղաքիս շնորհաւորել զշնորհաբաշխ մուտ Քո ի Քաղաքս մեր. և համբուրել ըզ-Արքազնասուրբ Աջ Օծելոյդ Աստուծոյ »:

Արշապատ.

28 և 29 Հոկտ. 1885 թի Երևան:

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒՌԹԵԱՆ ԳԱԼՍՏԱՆ ՀԱՆԴԻՍԻ ՀԱՄԱՌՕՏ  
ՆԿԱՐԱԳԻՐԸ.

Երբ հեռագիրն աւետեց Նորին Վեհափառութեան մուտն ի Տիփլիս, Երևանայ պաշտօնական տեղիքն ևս սկսեցին պատրաստուիլ Նորին Վեհափառութեան վայելուչ ընդունելութեան համար և ճաշ տալ, որ Նորին Վեհափառութիւնը միջոց չունեցաւ ընդունելու յճռած լինելով շուտ մեկնիլ ի Մայր Աթոռն: Պարոն Նահանգապետը, Պարոն Քաղաքագլուխը, Գերապատիւ Առաջնորդը թեմիս, Թեմական Դպրանոցի Վարչութիւնը՝ իւրաքանչիւրն իրանց վերաբերեալ պատրաստութիւնները տեսան: Ծաղկաձորի,